**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն**
**Վ Ա Յ Ո Ց  Ձ Ո Ր Ի**
**Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

<< 26 >>  <<հունիսի>>  2013 — N 65
ք. Եղեգնաձոր

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 7 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2013 թվականի հունիսի 13 -ի թիվ 01/11/3698-13 գրությունը.

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ Ե Մ**

**1.** Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի << Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմանների համաձայնեցման մարզային հանձնաժողով ստեղծելու և Վայոց ձորի մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 21 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 7 կարգադրության հավելվածում կատարել փոփոխություն <<Հ. Կարապետյան ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ>> բառերը փոխարինել <<Մ.Ղազարյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության Վայոց ձորի տարածքային բաժնի պետ>> բառերով:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է. ՂԱԶԱՐՅԱՆ